յոցս գերեզմանատան փոքրիկ մատուռն, որ ամբողջ քաղաքից երևում է իբրև զարդ և թագ գլխի վրայ դրած՝ բարձրութեան մի լաւ երևացող տեղում, որ այժմ շինուում է ծախսաք Տփխիսեցի հայազգի Մարիամու Գրիգորեան Միքաէլ, որոյ հիմնարկութեան արձանագիրն՝ որ մարմար քարի վրայ փորագրած՝ դրուեց հիման մէջ՝ է այսպէս.

«Յամի Տեառն 1894. և Հայկական 4386. զհիմն սուրբ Յարութեան տաճարիս՝ շինելոյ ծախսաք Տրփխիսեցի Հայազգի Մարիամու Գրիգորեան Միքաէլ, էօծ առաջնորդ Բագուայ Նահանգի Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց»։

Շատ յարմար է Ստեփաննոս եպիսկոպոս Օրբէլեանի Սիւնեաց պատմագրի խօսքերը կրկնել Բագուի սուրբ Յարութեան մատրան համար թէ՝ «մատանի էր անակն Վայոց - Ձոր, շինեցի զսա և եդի ակն ի վերայ»։

Այսպէս ասաց երբեմն՝ յամի Տեառն 936, մեզանից 958 տարի յառաջ Սիւնեաց Սօփիա տիկինն իրեն շինած Վայոց - Ձորոյ Գնդավանքի համար։

Բագու բառի ստուգաբանութեան կամ նշանակութեան համար տեղացիք հայ և թուրք յիշեցնում են բաղքիւ բառը, որով անուանում են Բագուի բերդը, որ նշանակում է ֆարսերէն քամահար, իբրև հիւսիսային մշտատեւ խիստ քամու առաջն առնող, որին Խազրի կամ Խազրաց քամի են անուանում, որ Խազրաց (Զէրբէգ—Ձաչան) աշխարհքիցն է փչում. թէ և այս քամին ամառները Բագուի բնակչաց զովացնող ու կենդանութիւն տուողն է, ինչպէս ասում են բագուեցիք, որ եթէ այս Խազրի քամին չլինի, Ֆարսի տաք քամին, որին Գիլանի կամ Գիլավաբի ասեն, կայրի, կխաշի բոլորովին։ Բագուն այժմ 1891 թ. է մի նշանաւոր վաճառաշահ, հարուստ, վայելուչ և բարեկարգ քաղաք ամենայն տեսարանով և միանգամայն բազմամարդ.